

ընթացքում նշեց, որ նորած Տեր Սամուել քահանան, Սայր Աթոռում քառասունըն անցկացնելոց հետո, կվերադառնա՝ ծառայելու Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի Արագովա և Խորենիա գյուղերում:

Քարոզի վերջում Սրբազան Հայրն իր մասնակի շնորհավորական խոսքն ուղղեց Խոր Վիրապ վանքի վանահայր Տ. Մխիթար ավագ քահանային՝ անմնացորդ աջակցության, և Գևորգյան հեմարանի Ձ լսարանի մի քանի սարկավազների՝ արարողության ընթացքում գործուն մասնակցություն ցուցաբերելու համար:

Ձեռնադրությանը ներկա էին հոգևորականներ և մեծաթիվ հավատացյալներ, ովքեր խորին հարգանքով մոտեցան Տեր Հորը՝ շնորհավորելու և նորած աջը համբուրելու:

ՍԱՀՄԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳՎԱՊԱՐՅԱՆ

ՏԵՐ ՍԱՄՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

(Ավագանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1974 թ. մարտի 8-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում:

1980-91 թթ. սովորել է տեղի Հովհ. Թումանյանի անվան հայկական թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1991-93 թթ. ծառայել է Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր հեմարան, ուր ուսանելով չորս տարի, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ու երաշխավորությամբ և ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի, ձեռնադրվել է քահանա: